ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-10-2-Ա

ք. Երևան 24.10.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հոկտեմբերի 24-ի նիստում քննարկեց 2019 թվականի հուլիսի 24-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Սարգիս Թարվերդյանի (Երևան, Վ. Դավթյան փ., տուն 13, AM) ընկերության բողոքը (No20181422) «DIESEL» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 33-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «BARREL» («Արմլոգիստիկ» ՍՊԸ, ք. Երևան, Ֆրունզե 6/1, բն. 42, AM, N 27954, 25.09.2018) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «DIESEL ONLY THE BRAVE DIESEL», «DIESEL» (DIESEL S.P.A. Via dell'Industria, 4/6 I36042 BREGANZE (VI) (IT), IR659761, IR659762 23.08.1996) համակցված և բառային ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 126-րդ կետի, 127-րդ կետի 1-ին, 4- րդ, 7-րդ ենթակետերի, 128-րդ, 129-րդ, 130-րդ կետի 2-րդ ենթակետի, 131-րդ կետերի համաձայն համեմատվող ապրանքային նշաններն ունեն պատկերային նմանություն, որը որոշվել է նշանների արտաքին տեսքով, նշանների համընկնող մասերի բնույթով՝ տվյալ դեպքում տարաների տեսքով: Թվարկված հատկանիշները հաշվի են առնվում

ինչպես առանձին, այնպես էլ տարբեր զուգակցություններով: Նշանների նմանությունը նմանակելու երևույթ է, որն առաջանում է նշանների տարրերի միատեսակ ընկալման արդյունքում: Նշանների նմանությունը որոշվում է դրանց տարրերի ընդհանրությամբ: Նմանության աստիճանի վրա ազդեցություն է թողնում համընկնող և չհամընկնող տարրերի հարաբերակցությունը, ինչպես նաև դրանց նշանակությունը նշանի ընդհանուր հորինվածքում: Ապրանքային նշանների նմանության առավել ընդհանուր չափանիշը տնտեսական շրջանառության ընթացքում սպառողի կողմից դրանք շփոթելու հնարավորությունն է: Նշանի նմանությունը որոշելիս հաշվի է առնվում, որ սպառողը, որպես կանոն, հնարավորություն չունի համեմատելու երկու նշանները, այլ առաջնորդվում է նախկինում տեսած նշանի մասին ունեցած ընդհանուր տպավորությամբ: Ինչպես նաև համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում գրանցված բառային ապրանքային նշանը և համակցված ապրանքային նշանի մաս կազմող «DIESEL» բառն ամբողջովին ներառված է հայտարկված համակցված ապրանքային նշաի մեջ:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ ներկայացվել է նամակ համաձայնագիր գրանցման ներկայացված «DIESEL» համակցված ապրանքային նշանի բառային տարրը գրանցելու վերաբերյալ, սակայն պատկերային մասը շփոթելու աստիճան նման է 33-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «BARREL» («Արմլոգիստիկ» ՍՊԸ, ք. Երևան, Ֆրունզե 6/1, բն. 42, AM, N 27954, 25.09.2018) համակցված ապրանքային նշանին:

Բողոքարկողը որևէ փաստարկ չներկայացրեց իր կողմից ներկայացված ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ «DIESEL» (No20181422) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ